

Դ. Սաքայեան

Մենքուպեան ալբուքենի ընթերցման երկու եղանակները.

Արեւմտահայերէնի ուղղագրութեան ուսուցման հարցեր եւ առաջարկներ

Ներկայ համաժողովի ծրագրի խորագիրը, ինչպէս եւ նրա չորս ենթավերնագրերը, ներթափանցուած են Սփիւռքի նախարարութեան նկատելի անհանգստութեամբ կամ, աւելի շուտ, հոգածութեամբ Սփիւռքում՝ արեւմտահայերէնի “ուսուցման արդի վիճակի,” “ուղղագրութեան ուսուցման հետ կապուած բարդութիւններին” եւ “ուսուցման ծրագրերի եւ դասագրքերի վերանայման անհրաժեշտութեան” մասին: Պէտք է ասել, սակայն, որ այդ չորս ենթավերնագրերը բաւականին ընդհանրական բնոյթ ունեն եւ նրանց մէջ չի ճշգրտուած թէ՛

1) Ուսումնական ո՞ր մակարդակի վրայ է քննարկուելու արեւմտահայերէնի դասաւանդումը, Սփիւռքի տարրական եւ միջնակարգ դպրոցների՞, թէ՞ համալսարանների հայագիտական ամբիոնների մակարդակի վրայ: Այսինքն, նկատի ենք ունենալու արեւմտահայերէնի ուսուցումը մանուկների եւ անչափահասների՞, թէ՞ մեծահասակների համար: Ձէ՞ որ սովորողների տարիքային առանձնայատկութիւններից ելնելով է միայն, որ կազմուած են դասագրքերն ու ուսումնական ծրագրերը, ընտրուած դասաւանդման եղանակները:

2) Քննարկումների մէջ Սփիւռքի երկրներն ու տարածաշրջանները սահմանազատուելո՞ւ են, եւ հաշուի առնուելո՞ւ է առանձին երկրներում արեւմտահայերէնի կարգավիճակի եւ կենսունակութեան հարցը: Ձէ՞ որ մի բան է արեւմտահայերէնի ուսուցման արդի վիճակը Մերձատր Արեւելքում, մի այլ բան՝ արեւմուտքի այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ֆրանսիան, Միացեալ Նահանգները կամ Արգենտինան: Ակներեւ է, որ հնարաւոր չէ արեւմտահայերէնի ուսուցման վիճակի մասին խօսել նկատի ունենալով Սփիւռքը որպէս ամբողջութիւն:

3) Սովորողների գիտելիքների մակարդակը հաշուի առնուելո՞ւ է, այսինքն՝ արեւմտահայերէնը որպէս ուսուցման առարկայ քննարկուելու է որպէս մայրենի լեզո՞ւ, թէ՞ որպէս երկրորդ կամ օտար լեզու: Ծագումով ո՞վ է սովորողը՝ հայ է, թէ՞ այլազգի: Իսկ եթէ հայ է, բայց ծագումով արեւելահայ եւ երբեք արեւմտահայերէնի հետ չի առնչուե՞լ:

4) Նկատի առնուելո՞ւ է այն լեզուն, որի հիման վրայ սովորողը կառուցելու կամ ընդարձակելու է արեւմտահայերէնի իր գիտելիքները: Երբ լեզուն ուսուցանուած է որպէս երկրորդ կամ օտար լեզու, ուսուցման զուգադրական մօտեցումը խիստ կարեւոր գործօն է: Յայտնի է, որ մեծահասակ սովորողները դժուար են լեզու յաղթահարում առանց

միջլեզուական զուգադրումների: Այդ տեսակետից համայն Սփիւռքի համար միասնական դասազերք կազմելու գաղափարը լուրջ քննարկումների կարօտ է:

Այս բոլոր հարցադրումների բնականոն կերպով առաջ գալը ցոյց է տալիս, որ սոյն համաժողովը անելի շուտ պրպտող, հետախուզական բնույթ ունի եւ որ Սփիւռքի նախա-րարութիւնը մեծ սպասումներ ունի այս գիտաժողովի ելոյթներից ու նրանց շաջորդող քննարկումներից: Տալով մասնակիցներին նիւթի ընտրութեան նման ազատութիւն՝ առանց յստակեցնելու քննարկութիւնք հարցերի շրջանակը, թուում է, որ սոյն համաժողովի կազմակերպիչները հոյս ունեն այդ եղանակով ի յայտ բերել արեւմտահայերէնի ուսուցման ոլորտի թերի կողմերը եւ «կառուցողական քննարկումներից» յետոյ միայն ձեռնարկել Սփիւռքում արեւմտահայերէնի ուսուցումը ճիշտ ուղու վրա դնելու աշխատանքներ*:

Այսօրուայ իմ գեկուցման նիւթը նոյնպէս սպասումներ ունի այս գիտաժողովից, ելնելով մասնատրաբար արեւմտահայերէնի ուղղագրութեան ուսուցման դժուարութիւններից: Նիւթս նուիրուած է ցատտ մի հարցի, որը բոլորիս յայտնի է, բայց եւ որը երբէք քննութեան առարկայ չի դարձել: Խօսքս մեսրոպեան ալբուբենի՝ հայերէնի երկու մասնահիւղերում ընթերցման երկու եւ իրարից շատ տարբեր եղանակների մասին է: Եկէ՛ք մի քիչ մօտիկից քննենք մեր մեսրոպեան ալբուբենը: Ումանք գուցէ առարկեն՝ ասելով, թէ ո՞վ մեսրոպեան ալբուբենը չգիտի: Այդպէ՞ս է արդեօք: Ասում են, որ կեանքում ամենաբացայայտն ու ամենահարազատն է, որին մէջ մենք ամենից քիչ ենք խորանում: Այդպէս էլ մեր ալբուբենը, ամենագօր ու ամենահաս, մեր հիմքերի հիմքը, առանց որի անհնար է պատկերացնել մեր գոյութիւնը, բայց եւ մանաւանդ հայոց լեզուի դասաւանդումը, լինի դա որպէս մայրենի, երկրորդ կամ օտար լեզու, լինի դա որպէս դպրոցական թէ համալսարանական առարկայ: Սակայն արդեօք մեզ հարց տալի՞ս ենք, թէ ինչպէս է այն այսօր ծառայում մեզ՝ հայերիս որպէս միասնական ազգ:

Իր եզակի, ուրոյն եւ գեղեցիկ գրանչաններով եւ իր ամբողջականութեամբ՝ մեսրոպեան ալբուբենը մշտապէս արժանանում է ոչ միայն հայերիս, բայց նաեւ օտարների հիացմունքին: Սկզբնապէս 36, իսկ անելի ուշ 38 իր գրանչաններով, այն իր մէջ պարփակում է իր ստեղծման շրջանի հայերէնի հնչիւնական ամբողջ համակարգը: Իր ժամանակին մեսրոպեան ալբուբենը հռչակուել է առաջադիմական: Նախ՝ այն ունի հնչիւնական բնույթ (Phonetic alphabet), քանի որ կազմուած է մեկ հնչույթ – մեկ տառ:

* Վերը նշուած չորս կետերում բարձրացրածս հարցերը համաժողովից յետոյ եւս մնացին չպարզաբանուած: Ելոյթներն ու քննարկումները չափազանց ընդհանրական բնույթ ունէին:

սկզբունքով եւ կոչուած է պատկերելու հայոց լեզուի 30 բաղաձայն, 1 կիսաձայն ու 6 ձայնաւոր հնչոյթները: Այն տարբերվում է արեւելեան (արաբական) այլ գրելաձեւերից նրանով, որ ա) այն ձախից աջ է ընթանում եւ բ) ձայնաւորների համար յատուկ գրանշաններ ունի: Եկէ՛ք այժմ՝ նայենք, թէ մեր այբուբենը ինչպէս է ծառայում հայոց լեզուի երկու տարբերակներին՝ արեւմտահայերէնին ու արեւելահայերէնին*:

Վարդուց է, որ հաշտուել ենք այն իրողութեան հետ, որ մեր այբուբենը հայ ժողովուրդի երկու հատուածների ներկայացուցիչների բերանում միանման չի հնչում: Հենց սկզբից, Այբ-Բեն-Գիմ-Դա-ն հայախօս մէկ հատուածի համար Ayb-Ben-Gim-Da է, իսկ միւսի համար Ayp-Pen-Kim-Ta: Այդ տարբերութիւնն անշուշտ օրինաւոր է եւ ունի իր հիմնաւորումը հայոց լեզուի հնչունների զարգացման պատմութեան մէջ (տե՛ս ստորեւ):

Յայտնի է, որ այբուբենները առանց միջամտութեան չեն փոխում, իսկ լեզուն յարավորտի երեսոյթ է: Մեսրոպեան այբուբենը իր ստեղծման ժամանակից ր վեր մեծ փոփոխութիւնների չի ենթարկուել, իսկ հայերէն գրական լեզուի երկու տարբերակները պատմականօրէն անցել են հնչունական զարգացման իրենց ուրոյն փուլերով՝ արեւմը-տահայերէնը յենուելով արեւմտեան բարբառների, իսկ արեւելահայերէնը արեւելեան բարբառների հնչունական առանձնայատկութիւնների վրայ: Դրա հետեանքով այսօր մեսրոպեան այբուբենի գրանշանների մի էական մաս հայոց լեզուի երկու մասնա-ճիւղերում տարբեր ձեւով է արտասանւում: Այստեղ խօսքս վերաբերում է յատկապէս հայերէնի պայթական եւ պայթաշփական 15 բաղաձայնների (բ, պ, փ — գ, կ, ք — ղ, տ, թ — ձ, ծ, ց — ջ, ճ, չ), որոնք արեւելահայերէնում չեն հնչւնափոխուել եւ արտասանութեան մէջ հիմնականում նոյնութեամբ պահպանել են իրենց վաղեմի եռաչարք (եռաստիճան) դասակարգումը՝ մէկական ձայնեղ, մէկական պարզ խուլ եւ մէկական շնչեղ խուլ բաղաձայնով:

(1) ձայնեղ	բ [b]	գ [g]	դ [d]	ձ [dz]	ջ [dj]
(2) պարզ խուլ	պ [pʰ]	կ [kʰ]	տ [tʰ]	ծ [tsʰ]	ճ [chʰ]
(3) շնչեղ խուլ	փ [pʰ]	ք [kʰ]	թ [tʰ]	ց [tsʰ]	չ [chʰ]**

Հնչւնների նման հարստութիւնը դեռ գրաբարում թոյլ է տուել ստեղծել եւ այսօր էլ արեւելահայերէնում ստեղծում է իմաստային եռանդամ հակադրութիւններ, ինչպէս՝

* Նշեմ, որ ելոյթիս մէջ շրջանցելու եմ աբեղեանական ուղղագրութեան շուրջը ծաւալուող բանավեճը, քանի որ այն տվեալ բաղաձայնների գրութեան վրայ որեւէ կերպ չի անդրադարձել:

** Պայթականների նմանօրինակ եռաչարք համակարգ գոյութիւն ունի վրացերէնում եւ այլ կովկասեան լեզուներում:

գող-կող-քող, դեր-տէր-թեր, ձախ-ծախ-ցախ եւ այլն:

Իսկ ի^հնչ է տեղի ունեցել արեւմտահայերէնում: Այնտեղ բաղաձայնների այդ խումբը հնչիւնափոխութեան հետեւանքով վերածուել է երկչարք (երկաստիճան) համակարգի, որն ինչպէս եւրոպական մեզ ծանօթ լեզուները պարունակում է միայն մէկական ձայնեղ եւ մէկական խուլ բաղաձայն հնչոյթ:

- | | | | | | |
|------------|---------|---------|---------|----------|----------|
| (1) ձայնեղ | պ[b] | կ[g] | տ[d] | ծ[dz] | ճ [dj] |
| (2) խուլ | փ, բ[p] | ք, գ[k] | թ, դ[t] | ձ, ց[ts] | ջ, չ[ch] |

երկաստիճան այս համակարգը, որի մէջ բացակայում է եռաստիճանի պարզ խուլ եւ չնչեղ խուլ բաղաձայնների տարբերակումը, տեղի է ունեցել բաղաձայնների տեղաշարժ:

(1) Առաջին շարքի բաղաձայնների մասին այսպես է գրում մեծանուն հայագէտ Հրաչեայ Աճառեանը: «Հին հայերէնի պարզ խուլերը [պ, կ, տ, ծ, ճ] նոր բարբառների արեւելեան բաժնում [այսինքն՝ Արարատեան բարբառներում – Դ.Ս.] մնում են անփոփոխ, իսկ միւս բարբառների մեջ դառնում են թրթռուն» [իմա՝ ձայնեղ՝ b, g, d, dz եւ dj – Դ.Ս.] (Աճառեան: Կիսկատար քերականութիւն հայոց լեզվի, հատ 6, էջ, 678). Այս տեղաշարժի հետեւանքով արեւմտահայերէնը զրկուել է մեսրոպեան երեք խուլ պայթական (p', k', t') եւ երկու խուլ պայթաչփական (ts', ch') բաղաձայններից, որոնք կորցրել են իրենց յատուկ որակը եւ ձայնեղ (b, g, d, dz եւ dj) են դարձել՝ գրաւելով ձայնեղների [բ, գ, դ, ձ, ջ] տեղը: Օրինակներ՝ պանիր (p'anir --> banir), կտոր (k't'or --> gdor), ծածուկ (ts'ats'uk' --> dzadzug), կրել (k'rel --> grel) եւ այլն.

(2) Երկրորդ շարքի բաղաձայնների տեղաշարժման դէպքում խախտուել է մեսրոպեան մէկ հնչոյթ – մէկ տառ սկզբունքը եւ փոխարինուել մէկ հնչոյթ – երկու տառ իրավիճակով: Այդ երեւոյթի մասին կարդում ենք Աճառեանի մօտ. «Մինչքեռ արեւելեան կոչուած բարբառները հաւատարմութեամբ պահում են մեսրոպեան հայերէնի թրթռուններն [իմա՝ ձայնեղները՝ բ, գ, դ, ձ, ջ – որպէս b, g, d, dz, dj, – Դ.Ս.], արեւմտեան կոչուած բարբառները դրանք վերածում են խուլերի [հմմտ. բ, գ, դ, ձ, ջ – որպէս p, k, t, ts, ch, – Դ.Ս.] (Աճառեան: Կիսկատար քերականութիւն հայոց լեզվի, հատ. 6, էջ 586): Այսպիսով, մէկ հնչոյթի համար կայ երկու գրանշան, ինչպէս ք-ի համար՝ բ եւ փ, կ-ի համար՝ գ եւ ք, ւ-ի համար՝ դ եւ թ, ւ-ի համար՝ ձ եւ ց, եւ չ-ի համար չ եւ ջ: Դրա հետեւանքով ստեղծուել են համահունչ համանուններ, ինչպէս

բառ եւ փառ, գող եւ քող, դոյլ եւ թոյլ, գալլ եւ քալլ, դուք եւ թուք, ձող եւ ցող եւ այլն:

Ի յաւելումն այս բոլորի, արեւմտահայերէնի ուղղագրութեան համար առաջացել է մի այլ դժուարութիւն եւս: Դա ձայնորդ ւ-ի գրութեան համար կրկնորդներ ու-ի ու ր-ի գոյութիւնն է, որոնց արտասանական տարբերութիւնը արեւմտահայերէնում թոյլ է կամ

բնաւ արտայայտուած չէ եւ դժուար է հնչեղութեամբ զանազանել այնպիսի բառեր, ինչպէս՝ վառել եւ վարել, առատ եւ արատ, բեռ եւ բեր, լուռ եւ լուր եւ այլն:

Բնական է, որ այս բոլորը ուղղագրութեան ուսուցման համար որոշակի բարդութիւն են ներկայացնում: Սովորողները դժուարանում են հասկանալ, թէ ինչի՞ է ծառայում հայկական այբուբենում գրերի այդ մեծ թիւը, եթէ նրա մէջ հաճախ նոյն հնչոյթի համար երկու գրութիւն գոյութիւն ունի: Իսկ ուսուցիչները միշտ չէ որ այդ օրինաւոր հարցերի պատասխանն ունեն: Լուր՝ են դրա մասին նաեւ դպրոցական դասագրքերը կամ ուսուցիչների համար նախատեսուած ուղեցուցիչները:

Կա՞ն արդեօք լուծումներ այս դժուարին իրադրութիւնը շտկելու համար: Իմ կարծիքով, այո՛, կան, եթէ վորձենք մեքսիկական այբուբենի պատմութեան մասին լրյս, այսինքն գիտելիք յարողել արեւմտահայերէն սովորողներին, եւ ինչո՞ւ չէ, նաեւ որոշ ուսուցիչներին: Եթէ նրանց տրուի հիմնաւոր բացատրութիւն, թէ ինչով է պայմանաւորուած 30 բաղաձայնների առկայութիւնը հնչոյթների ավելի նուազ թիւի պայմաններում: Եթէ նրանք տեղեկանան եռաչարք համակարգի մասին, սովորեն արտաբերել այն, համեմատեն ներկայ երկչարքի հետ եւ հասկանան, թէ ինչպիսի ճանապարհ են անցել այդ բաղաձայնները: Իսկ ի՞նչ, եթէ արեւմտահայերէնի դասագրքերում տեղադրուի հնչիւնաբանութեան նուիրուած յատուկ մի գլուխ կամ յաւելուած, որտեղ գիտականօրէն հիմնաւորում են հայ այբուբենի արտասանման եղանակները հայոց լեզուի երկու տարբերակներում: Ի՞նչ, եթէ արեւմտահայերէնի ուսուցիչը նախքան դասարան մտնելը ձեռք բերի հայոց լեզուի պատմական հնչիւնաբանութեան որոշ գիտելիք: Ի՞նչ, եթէ սփիւռ-քահայ աշակերտը այդ գիտելիքով գինուելուց յետոյ միայն առնչուի արեւելահայ կենդանի խօսքի հետ: Ներկայումս աւելի քան երբեք իրար մօտեցել են Սփիւռքն ու Հայրենիքը, շատացել են ամէն տեսակի շփումները, ինչպէս արդէն երկար տարիներ ի վեր իրականացուող սփիւռ-քահայ ուսուցիչների վերապատրաստումը Մայր Հայրենիքում, դպրոցականների ամառային հանգստի կազմակերպումը հայրենի ճամբարներում, “Արի Տուն” ծրագրի եւ յարակից այլ ծրագրերի իրականացումը: Ժամանակն է, որ մեր լեզուի երկու ճիւղերը մերձենան նաեւ հայկական ուսումնական հաստատութիւնների մակարդակի վրայ, այսինքն որ արեւելահայերէնը դառնայ Սփիւռքի, իսկ արեւմտահայերէնը՝ Հայրենիքի դպրոցների համար պարտադիր ուսումնական առարկայ:

Մեքսիկական այբուբենի ընթերցման երկու եղանակները առաջացրել են մի այլ բարդութիւն, որը երբեմն դուրս դուրս է գալիս մեր նեղ, ներլեզուային խնդիրների սահմաններից: Խօսքս յատուկ անունների, անձնանունների ու տեղանունների, տառադարձման մասին է: Այստեղ խստօրէն պէտք է զանազանել տառադարձման երկու

ուղղութիւն. մէկը՝ երբ ալլալեզու յատուկ անուններ գրուած են հայերէն տառերով (հայատառ տառադարձում) եւ միւսը՝ երբ հայոց լեզուի յատուկ անունները գրուած են լատին տառերով (լատինատառ տառադարձում): Ցաւօք՝ երկու դէպքում էլ տիրում է ուղղագրական խառնաշփոթ, որն արդիւնք է հայոց լեզուի երկու տարբերակների հնչունային երկփեղկուածութեան:

Հայատառ տառադարձման անընդունելի օրինակներից են Canada-ն, որը արեւմտահայերէնում գրուած է Գանատա կամ Քանատա (արեւելահայերէնում՝ Կանադա), California-ն, որը արեւմտահայերէնում գրուած է Գալիֆորնիա կամ Քալիֆորնիա (արեւելահայերէնում՝ Կալիֆոռնիա), Berlin-ը՝ Պերլին (արեւելահայերէնում՝ Բեռլին), Dallas-ը՝ Տալլաս (արեւելահայերէնում՝ Դալաս), Beatles-ը՝ Պիթըլզ (արեւելահայերէնում՝ Բիթլզ), Barack Obama-ն՝ Պարաք Օպամա (արեւելահայերէնում՝ Բարաք Օբամա) եւ այլն: Ժամանակն է, որ օտար անունների համար ստեղծուի համահայկական տառադարձութիւն, որը կողմնորոշուած է մեքսիկացի անվանաբանութեամբ, ինչպէս ժամանակին ստեղծուել են բազմաթիւ աշխարհագրական անուններ, օրինակ՝ Գերմանիա, Անգլիա, Իտալիա, Կիպրոս, Բաբելոն եւ այլն: Հոգ չէ թէ արեւմտահայերէնում դրանք արտասանուեն Kermania, Anklia, Idalia, Gibros, Papylon եւ այլն:

Լատինատառ տառադարձման մէջ նոյնպէս իշխում է անասելի խճճուածութիւն: Դրանում համոզուելու համար բաւական է նայել, թէ ինչպէս են ալլալեզու գրականութեան մէջ կամ համացանցում տառադարձուած որչափ հայկական յատուկ անունները: Հանդիպում են ոչ միայն զուտ հայկական անուններ, ինչպէս Գուրգէն որպէս Kurken կամ Gurgen, Կարինէ որպէս Garine կամ Karine, Բաբելոն որպէս Papgen կամ Babken, Պայծառ որպէս Baydzar կամ Paytsar, այլեւ միջազգային ծագում ունեցող հայկական անձնանուններ, ինչպէս Պետրոս՝ որպէս Bedros եւ ոչ Petros, Գաբրիէլ՝ որպէս Kapriel եւ ոչ Gabriel, Դանիէլ որպէս Taniel եւ ոչ Daniel եւ այլն: Նոյնը վերաբերում է նրանց ածանցեալներին, որոնք հանդէս են գալիս մերթ մէկ, մերթ միւս ձեւով: Հմմտ. Bedrossian կամ Petrossian (նաեւ՝ Der-Bedrossian կամ Ter-Petrossian), Kaprielian կամ Gabrielian, Tanielian կամ Danielian եւ այլն... Վիճակն աւելի է բարդանում, երբ յայտնի հայերի անուններն են տարբեր ձեւերով տառադարձուած, երբ անուններն ալլալեզու անձնաչելի դառնալով՝ գրականութեան մէջ կամ համացանցում անորոնելի են: Komitas թէ՞ Gomidas, Garegin I թէ՞ Karekin I, Paruyr Sevak թէ՞ Baruyr Sevak, Petros Durian թէ՞ Bedros Turian, Sylva Kaputikian թէ՞ Sylva Gabudigian և այլն: Սա արդէն խճճող եւ մոլորեցնող երեսօյթ է, մանաւանդ երբ պէտք է ներկայանանք օտարներին:

Ե՛ւ հայատառ, ե՛ւ լատինատառ տառադարձման խնդիրը լուրջ ուշադրութեան կարիք

ունի: Այն պէտք է նախ Սփիւռքի եւ Հայրենիքի մասնագէտների կողմից խորապէս ուսումնասիրուի, միասնական սկզբունքներով մշակուի եւ ապա միայն յատուկ օրէնսդրութեամբ ամրագրուի: Երկու դէպքում էլ կողմնորոշումը պէտք է լինի մեսրոպեան: Դրանով են ալբուբենի ստեղծման օրուանից հայ մատենագրութեան մէջ ամրագրուել յոյն եւ ալլալեզու յատուկ անունները: Այդ նոյն սկզբունքով էլ այսօր ալլալեզու անձնանուններն ու տեղանունները պէտք է ունենան իրենց հայատառ վերջնական եւ միասնական ձեւերը, իսկ հայկական յատուկ անունները իրենց լատինատառ պատշաճ տառադարձումը:

Dora Sakayan
Professor of German Studies
McGill University
Montreal, Canada

dora.sakayan@mcgill.ca
www.dorasakayan.com

10.10.2010